ՀՀ ԿԳՄՍՆ«Սևանի Խ.Աբովյանի անվան ավագ դպրոց»ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Օտար լեզուների ուսուցումը խաղի ու երգի միջոցով

Կատարող՝ Աննա Ռոբերտի Անտոնյան

Վերապատրաստող՝ Հակոբյան Զուլիետա

Դպրոց՝ Չկալովկայի միջնակարգ դպրոց

Սևան2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Խաղի նշանակությունը օտար լեզվի ուսուցման մեջ.....6
Երաժտության միջոցով օտար լեզվի ուսուցումը 11
Եզրակացություն 14
Գրականության ցանկ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից է դառնում ուսուցումը հետաքրքրիր դարձնելը, հատկապես օտար լեզուների ուսուցման գործընթացը, որը պահանջում է ստեղծագործական մթնոլորտի ապահովում, ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրում: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի և հետաքրիր պետք է լինեն սովորողների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժանամակ խթան հանդիսանան աշակերտների ստեղծագործական միտքը զարգացնելու գործում:

Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Ինչպես նշվեց վերևում, խաղը բացի ժամանցային երևույթ լինելուց, ունի նաև դաստիարակչական, ուսուցողական նշանակություն: Այս դեպքում այն հանդես է գալիս որպես միջոց, մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար:

Դպրոցում, ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Այսօր, երբ կյանքը անընդհատ և անդադար առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից է դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Օտար լեզուների ուսուցման մեջ խաղը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կողմից ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև:

Իսկ երբ ուսումը համեմվում է տարբեր խաղերով, դրանք երեխայի համար դառնում են ավելի հետաքրքիր, ցանկալի, սրտամոտ, հոգեհարազատ: Խաղի մուտք գործելը մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում փոխվում է միջավայրը, որը դառնում է յուրահատուկ ու նոր: Եթե մինչև խաղի մուտք գործելը գոյություն ունեին ուսուցիչ-աշակերտ կամ աշակերտ-աշակերտ հարաբերություններում ինչ-ինչ խանգարող հանգամանքներ, ապա խաղի մուտք գործելով դրանք կամաց-կամաց

անհետանում են:

Իսկ այսպիսի իրավիճակում աշակերտը կարողանում է անկաշկանդ արտահայտել իր մտքերը: Խաղի առկայությամբ աշակերտը աննկատելիորեն ընդգրկվում է ուսուցման այս կամ այն գործընթացում, նույնիսկ իր կարծիքն է հայտնում առաջացած խնդիրների լուծման մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում և ավելի հեշտությամբ է մտապահում առաջին անգամ տեսածն ու լսածը: Ցանկալի է, որ խաղը միջոց լինի ուսուցմանը և ծառայի ուսումնական նպատակին:

Իսկ ուուցանող խաղերը, հետաքրքրշարժ առաջադրանքները, սևեռում են աշակերտի անկայուն ուշադրությունը դասի ընթացքում, տալիս են նոր գիտելիքներ, պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, արագորեն զարգացնում են երևակայությունը:

Խաղի ժամանակ կարևորվում է նաև դաստիարակչական կողմը, քանի որ երեխաները ավելի մոտիկից են առնչվում, մրցակցում, վիճում, իրար օգնում,դառնում են ավելի ինքնուրույն ու ընկերասեր: Օտար լեզուների մյուս հնարը, որը հոգեհարազատ և սիրված է աշակերտների կողմից, դա երգն ու երաժշտությունն է: Չէ որ երգն ու երաժշտությունն յուրաքանչյուր անհատին ուղեկցում են ողջ կյանքի ընթացքում, տարբեր իրավիճակներում, ուրախ և տխուր պահերին, դրանք հաճույքի, զվարճանքի և ոգեշնչման մեծ աղբյուր են, հաղորդակցման ու շփման հզորագույն միջոց են: Երգն ու երաժշտությունը օտար լեզվի դասավանդման հետ կարելի է ոգևորել և հետաքրքություն առաջացնել աշակերտների մեջ, նպաստել նրանց լիարժեք զարգացմանը, ձևավորել ստեղծագործական մտածողություն և ճաշակ:

Երաժշտությամբ ուղեկցվող օտար լեզվի դասերը կարող են ներառել տարբեր գործողություններ, օրինակ՝ երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երգի ստեղծման պատմության ներկայացում, երգի մենկնաբանում աշակերտների կողմից՝ ըստ իրենց ընկալման աստիճանի:

Սա հնարավորություն է տալիս սովորել օտար լեզվով նոր բառեր, ծանոթ լինել երգի ստեղծման պատմությանը և դա ներկայացնել օտար լեզվով: Աշակերտները կարող են հաղորդկացվել միմյանց հետ օտար լեզվով՝ դասընկերների հետ

քննարկելով երգից ստացած տպավորությունները: Իսկ երգեցողությունը

հնարավորություն կտա աշակերտների շրջանում զարգացնել օտար լեզվով ճիշտ հաղորդակցվելու և բառերը ճիշտ շեշտադրելու ու արտասանելու կարողություն: Աշակերտները կարող են երգից ստացված տպավորություններն արտահայտել օտար լեզվով՝ կազմելով երգը բնորոշող բառակապակցություններ և նախադասություններ:

Հետազոտության օբյեկտը՝ օտար լեզվի ուսուցումը խաղի և երգի միջոցով:

Հետազոտության նպատակն է դպրոցական տարիքի երեխաներին սովորեցնել օտար լեզու՝ խաղի և երգի միջոցով, թեթևացնել ուսուցման գործընթացը:

Հետազոտության խնդիրները.

Ուսումնասիրել խաղերի և երգերի ուսումնական և զարգացնող հնարավորությունները

Հիմնավորել օտար լեզվի ուսուցման ժամանակ խաղի և երգի դերը դպրոցականների ուսումնական գործընթացի արդյուանվետության բարձրացման գործում:

Խաղի նշանակությունը օտար լեզվի ուսուցման մեջ

Քանի որ հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ խաղը, որը կրտսեր դպրոցականների կյանքում, ինչպես նաև ուսուցման գործընթացում անբաժան մաս են կազմում, ուստի ուսումնասիրել եմ գրականություն խաղերի վերաբերյալ, ինչպես նաև օգտվել եմ համացանցից, փորձելով ավելի խորը ուսումնասիրել և ճանաչել խաղի դերը կրտսեր դպրացականի կյանքում: Ստորև ներկայացնում եմ գրականությունից ինձ հանդիպած մտքերը խաղային գործունեության վերաբերյալ.

Խաղ, գործողություն, որ կատարվում է հաճույքի համար, իսկ երբեմն էլ օգտագործվում որպես ուսոցողական գործիք:

«Մենք բոլորս ծնունդով մանկությունից ենք:Շատ հաճախ կարելի է զուգահեռներ անցկացնելկյանքի ու խաղային իրավիճակների միջև և եզրակացնել՝ վերջիններս ունեն ընդհանրություններ:Երեխան խաղի միջոցով իր երևակայությամբ ստեղծում է իրավիճակ, երևակայական աշխարհ լեցուն փորձություններով, որոնցից փորձում է ելք գտնել:Այսպիսով զարգանում է երեխայի երևակայությունը, տրամաբանությունը և հնարամտությունը»:/Զիգմունդ Ֆրեյդ-Journalist թերթ/

«Երեխայի զարգացման հիմքում խաղն է:Խաղի միջոցով փորձ են ձեռք բերում և ուսումնասիրում են իրենց շրջապատող աշխարհը.նրանք բացահայտում են իրենց ֆիզիկական միջավայրը, արտահայտում են սեփական հույզերը: Խաղալիս նաև սեփական բառապաշար են ձևավորում:» /babycef.am կայք /

Ղ. Աղայանի՝ մանուկների համար հորինած խաղերն ու բանաստեղծությունները կենսունակ են, որովհետև գրված են անկեղծությամբ և մանուկների ներաշխարհի խոր իմացությամբ: Աղայանը երեխաներին սիրում էր անմնացորդ կերպով:

Մանուկների աշխարհը և դաստիարակությունը նրա տարերքն էր: Մանկական խաղերը պարզաբանելով՝ Աղայանը գրում էր. «Երեխան ոգի ունի. ուզում է զվարճանալ, երգել, խաղալ, մտածել և դատել: Ղ. Աղայանը սեփական կենսափորձով հիմնավորում էր, որ յուրաքանչյուր խաղ ունի իր հատուկ

նշանակությունը. զարգացնում է երեխայի այս կամ այն ունակությունը,

հարստացնում միտքը, ապահովում նրա ներդաշնակ զարգացումն ու կրթությունը: Նա շեշտում է, որ խաղը երեխայի ինքնուրույն ստեղծագործական գործունեությունն է:

Երեխային մտավոր աշխատանքի տրամադրելու համար անհրաժեշտ է խաղը դարձնել հետաքրքիր, զբաղեցնող, միտք շարժող: Խաղի ճիշտ կազմակերպումն ու անցկացումը երեխային հնարավորություն է տալիս խաղի, խաղային ձևի նմիջոցով ստանալ անհրաժեշտ գիտելիքներ, իսկ ուսուցչին՝ զարգացնել երեխաների մտավոր գործունեության տարբեր կողմերը:

Երեխանին նոր գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև գիտելիքների ամրապնդման մպատակով դպրոց հաճախելու հենց առաջին օրվանից անցկացվում են խաղեր՝ համատեղելով նաև օրվա նյութի հաղորդման հետ: Քանի որ երեխաների մոտ այնքան զարգացած չեն ուշադրությունը, հիշողությունը և հոգեկան մյուս պրոցեսները՝ավելի բարդ մեթոդներ կիրառելու համար, օգտագործվում են խաղերը՝ նրանց տարիքային խմբի առանձնահատկություններին և մտավոր կարողություններին համապատասխան:

Խաղերը, որպես ուսուցման ձև, իրենց բնույթով բարդ են, քանի որ դպրոցում հետապնդում են երկու նպատակ՝ ուսուցողական և խաղային: Երեխաները մասնակցելով խաղին սովորում են, իսկ ուսուցիչը ղեկավարելով խաղը՝ սովորեցնում է: Ուսուցչի դերը այս դեպքում ավելի ընդգծված է, երբ խաղը հանդես է գալիս որպես նոր գիտելիքների հաղորդման միջոց:

Խաղերը՝ որպես ուսուցման յուրահատուկ ձև ավելի ցայտուն են արտահայտվում, երբ դրանք համատեղում ենք պարապմունքների հետ: Դասի ժամանակ խաղերն անցկացվում են աշակերտական մեծ ու փոքր խմբերով՝ուսուցչի ղեկավարությամբ, որոնց անցկացման նպատակն է հին նյութի և աշակերտներին հանձնարարվող նոր թեմայի ավելի արդյունավետ յուրացումը:Խաղերի մեջ ներգրավված պետք է լինեն բոլոր աշակերտները:

Երբ դասն անցկացվում է խաղի միջոցով, որի ժամանակ դասի թեմային համապատասխան պարագաներ են օգտագործվում, ավելի հեշտ է նյութը ընկալվում աշակերտների կողմից:

Մանկավարժության և հոգեբանության ոլորտը ներկայացնող մասնագետները

գտնում են, որ երեխայի անհատականությունն ու աշխարհընկալումը առաջին հերթին լիարժեք և ամբողջական կերպով արտահայտվում են խաղի միջոցով:Այն երեխայի համար ոչ միայն կենսաբանական ներքին պահանջ է, այլև ճանաչողության միջոց և ուսուցման բաղկացուցիչ մաս: Խաղն ունի այնպիսի մանկավարժական դերակատարում, որ կարող է երեխային ընդգրկել ակտիվ ուսուցման մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում և հեշտությամբ է մտապահում թե իր և թե իր ընկերների արտահայտած մտքերն ու բազմաբնույթ գործողությունները: Ոչ-ոք չի կարող հերքել, որ 6-8 տարեկանում երեխան ընկալունակ է և կարող է ըմբռնել բազմաբնույթ տեղեկատվություն: Նա դրանով զարմացնում է իր շրջապատին, սակայն նրա իմացական կարողությունները, կամային որակներն ու սոցիալական հմտությունները զարգանում են հաջորդ դասարաններում: Տարրական դասարաններում երեխայի համար խիստ կարևոր է խմբով որևէ խաղի մասնակցելը: Դա ինքնաարտահայտման միջոց է դառնում յուրաքանչյուր երեխայի համար: Խաղի միջոցով բացահայտվում է նրա մեջ թաքնված ներուժը:

Խաղը երեխայի միակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման, ուշադրության կենտրոնացման կարևոր միջոց է, որը բացահայտում է երեխայի բնավորության բոլոր կողմերը: Խաղի միջոցով կարելի է ոչ միայն կրթել, այլ նաև դաստիարակել երեխային:

Հետազոտության ընթացքը

Մենք գիտենք, որ դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնությունը, ինչ-որ բան սովորելու հակումը, հետաքրքրասիրությունը:

Երեխան խաղալով հասկանում է ինքն իրեն, ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, գիտելիք է ձեռք բերում ամենատարբեր հարցերի շուրջ: Հստակ խնդիրներ ու նպատակներ ունեն հատկապես մտավոր խաղերը, զարգացնել երեխաների հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, քանի որ առանց այդ հատկանիշների անհնար է երեխային ամբողջովին զարգացնել: Աշակերտի համար առաջատար գործունեություն է դառնում ուսումը: Սակայն դեռ երեկ իր զվարթ խաղերով տարված դպրոցականը չի կարող լիովին

զերծ մնալ դրանցից: Այդ պատճառով, երբ օտար լեզվի ուսուցումը խելամտորեն

զուգակցվում է խաղերով, երեխաների համար բացվում է մի նոր՝ առավել հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի աշխարհ: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ- աշակերտ, և, ինչու չէ, նաև աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչ այդ գոյություն ունեին ինչ-ինչ պատնեշներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանում են: Օտար լեզվի ուսուցման ժամանակ խաղի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջնային են դրա ճիշտ ու ժամանակին կազմակերպումը և անցկացման մեթոդները:

Խաղը կազմակերպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ

- Խաղը և դրա կանոնները լրիվ հասկանալի լինեն երեխաներին
- Խաղի բովանդակությունը համապատասխան լինի խաղացողների գիտելիքների մակարդակին
- Խաղը նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը:

Օտար լեզվի ուսուցման ժամանակ խաղի կիրառման օրինակներԽաղի անվանումն է <<Գնացք>>

Ուսուցանել եմ առարկա և գործողություն ցույց տվող բառերը <<Գնացք>> խաղի միջոցով: Դասարանը բաժանվել է 2 խմբի:Դասից ընտրել են առարկա և գործողություն ցույց տվող բառեր և միացել իրենց շոգեքարշին (1-ին առարկա, 2-րդ գործողություն):Երբ սխալ էին միանում, գնացքը քանդվում էր և չէր կարողանում հասնել կայարան:

Տառերի թռիչք

Խաղի նպատակը՝ զարգացնել և ամրակայել հնչյունների վերաբերյալ աշակերտների գիտելիքները, արագ կողմնորոշվելու ունակությունը, ձևավորել ինքնուրույնություն, ճկուն դարձնել մտածողությունը:

Խաղի ընթացքը

Խաղին մասնակցեցին դասարանի բոլոր աշակերտները: Խաղավարն ասում է տարբեր հնչյուններ, որոնցով մյուս աշակերտները պետք է կազմեն բառեր: Նա հուշում է, թե տվյալ հնչյունը որտեղ պետք է լինի՝ բառասկզբում, բառամիջում, թե բառավերջում: Օրինակ՝ ա՝ բառասկզբում՝ արև, աստղ, անտառ, կ՝ բառամիջում՝ երկինք, երկար, թանկագին, լ՝ բառավերջում՝ լսել, սիրել և այլն:

Խաղն անցկացվեց դասի վերջում՝ աշակերտների ֆիզիկական հոգնածությունն թոթափելու համար:

Ուղղում ենք սխալները

Խաղի նպատակն է զարգացնել աշակերտների ուշադրությունը, ինքնուրույնությունը, հիշողությունը:

Խաղի ընթացքը՝

Աշակերտները շրջան են կազմում: Խաղավարը օտար լեզվով նախադասություն է կազմում, որում առկա են սխալներ: Օրինակ՝ «Ամռանը ձյուն է գալիս», «Ձմռանը այգում ծաղկում են խնձորենիները», «Ներքևում նրանց վրա պառկել էր տափաստանը» և այլն: Նախադասությունները յուրաքանչյուր մասնակցի առաջարկում են հերթականությամբ: Նա, ով սխալ չի գտնում, դուրս է մնում խաղից: Այս դեպքում նույն առաջադրանքը տրվում է հաջորդ մասնակցին:

Երաժտության միջոցով օտար լեզվի ուսուցումը

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն: Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որայն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն: Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները:

Երաժշտությունը օտար լեզվի ուսուցման ժամանակ առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել:

Օտար լեզվի ուսուցիչը պետք հստակ նպատակներ դնի իր առջև:

1. Աշակերտի մոտ ձևավորել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:
2. Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:
3. Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները,
4. Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր: Դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր:
5. Գիտակցել երաժշտական արվեստի դերը ժողովուրդների հասարակական, մշակութային և պատմական համատեքստում, հասկանալ նրա նշանակությունը՝ որպես միջմշակութային հաղորդակցության միջոց:

Եթե երեխան չունի երգելու կարողություն և հնարավորություն, ոչինչ, այդ երեխան թող ունկնդրի, նկարի երաժշտությունից կամ երգից ստացած տպավորությունները, թող երաժշտառիթմիկ շարժումներ անի կամ պարի, բայց թող

մասնակցի: Անխտիր բոլոր սովորողները կարող են ունկնդրել երաժշտությունը, բնական /ծափ, դոփյուն, ճտոց, կտտոց/ և մանկական հարվածային նվագարաններով ցույց տալ զարկի ռիթմական պատկերներ:

Օտար լեզվի ուսուցիչը պետք է.

1. պակասեցնի օտար լեզվի ուսուցման ժամանակ դժվարությունների ներգործությունը,
2. թույլ չտա, որ զարգանան այդ դժվարությունները,
3. լուծի վարքագծի խնդիրներ,
4. ուսումնական պրոցեսում ակտիվացնի առօրյա կյանքում օգտագործվողկարողունակությունները,
5. լավացնի դասարանում փոխհարաբերությունները:

Այս բոլոր կարողությունները կարող են օգնել օտար լեզվի առարկայի ուսուցչին իրականացել հետաքրքիր և ինտերակտիվ դասաժամ:

Յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է մեթոդների ընտրության հարցում, իսկ ճիշտ ընտրված մեթոդը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել օտար լեզվի ուսուցման գործընթացը:

Օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թո ուսուցումը որքանով է աշակերտակենտրոն, և ինչպես է մատուցվում և գնահատվում աշակերտի գիտելիքներն ու կարողությունները:

Օրինակ՝ օտար լեզվի ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող երգի տեքստը: Սա կարող է նպաստել նրան, որ սովորողները հասկանան երգի բովանդակությունը և լսելուն զուգահեռ ընկալեն երգն ամբողջությամբ: Զուգահեռ օտար լեզվի ուսուցիչը կարող է ընդհատել տեսահոլովակի ցուցադրումը, և բացատրել դժվարամատչելի հատվածը, ևս մեկ անգամ լսել և փորձել երգել:

Երաժշտությամբ ուղեկցվող օտար լեզվի դասերը կարող են ներառել տարբեր գործողություններ, օրինակ՝ երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երգի ստեղծման պատմության ներկայացում, երգի մենկնաբանում աշակերտների կողմից՝

ըստ իրենց ընկալման աստիճանի: Սա հնարավորություն է տալիս սովորել օտար լեզվով նոր բառեր, ծանոթ լինել երգի ստեղծման պատմությանը և դա ներկայացնել օտար լեզվով: Աշակերտները կարող են հաղորդակցվել միմյանց հետ օտար լեզվով՝ դասընկերների հետ քննարկելով երգից ստացած տպավորությունները: Իսկ երգեցողությունը հնարավորություն կտա աշակերտների շրջանում զարգացնել օտար լեզվով ճիշտ հաղորդակցվելու և բառերը ճիշտ շեշտադրելու ու արտասանելու կարողություն: Աշակերտները կարող են երգից ստացված տպավորություններն արտահայտել օտար լեզվով՝ կազմելով երգը բնորոշող բառակապակցություններ և նախադասություններ:

Նախքան երգի ունկնդրումը դասավանդողը պետք է ներկայացնի դրա մասին ինֆորմացիա, զուգակցելով մայրենի լեզվով բացատրություններով, այնուհետև դասարանում դիտեն և լսեն երգի տեսահոլովակը տողատակերով, մեկընդմեջ ընդհատումներով, որպեսզի բացատրվեն դժվարամատչելի բառերը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես երաժշտության միջոցով օտար լեզվի ուսուցումը բարձր արդյունավետ է, քանի որ լսելով աշխուժացնող երաժշտության ռիթմերը, աշակերտները չեն ձանձրանում, կենտրոնանում են կատարվող գործողությունների վրա և հնարավորություն ունեն նաև տանը բազմակի անգամ լսելու և ամրապնդելու նոր սովորած օտար լեզվի բառերը: Սա աշակերտի մոտ զարգացնում է ևս մեկ կարևոր հմտություն՝ օտար լեզվով ինֆորմացիա լսելու և ընկալելու կարողություն:

Երաժշտության միջոցով օտար լեզվի ուսուցումը արդյունավետ է նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման դեպքում: Նման ձևով կրթությունը դառնում է ստեղծագործական և հնարավորություն է տրվում աշակերտներին արտահայտել իրենց կարծիքը, հաղորդակցվել օտար լեզվով:

Այսպիսով՝ երաժշտության միջոցով օտար լեզվի ուսուցումը նպաստում է անձի ինքնաարտահայտմանը, ինքնազարգացմանը՝ ինքնուրույն աշխատելու փորձով օժտված, մտավոր գործունեության հնարներին տիրապետող և համագործակցելու պատրաստ անհատականության ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է մեթոդների ընտրության հարցում, իսկ ճիշտ ընտրված մեթոդը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել օտար լեզվի ուսուցման գործընթացը:

Օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է աշակերտակենտրոն, և ինչպես է մատուցվում և գնահատվում աշակերտի գիտելիքներն ու կարողությունները:

Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հանգելու այն եզրակացության, որ խաղը աշակերտի համար ուսուցման լավագույն միջոցներից է: Խաղի ընթացքում է, որ ուսուցիչը ավելի լավ է տեսնում երեխայի ուշադրությունը, ինքնավստահությունը, արագաշարժությունը, շուտ կողմնորոշվելու ունակությունն ու ճարպկությունը:

Օգտագործելով խաղային մեթոդները դպրոցականների օտար լեզվի ուսուցման գարծընթացում կարելի է գալ այն եզրահանգման, որ դասը դառնում է ավելի արդյունավետ ու նպատակային: Դասի ընթացքում աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Խաղի ընթացքում երեխան նաև տիրապետում է վարքի բարոյական նորմերին ու կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում նրանց անձի ձևավորման գործում: Զարգանում է աշխատասիրություն, ուշադրություն, պատասխանատվության զգացում:

Երաժշտությամբ ուղեկցվող օտար լեզվի դասերը կարող են ներառել տարբեր գործողություններ, օրինակ՝ երաժշտության ունկնդրում, երգեցողություն, երգի ստեղծման պատմության ներկայացում, երգի մենկնաբանում աշակերտների կողմից՝ ըստ իրենց ընկալման աստիճանի:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես երաժշտության միջոցով օտար լեզվի ուսուցումը բարձր արդյունավետ է, քանի որ լսելով աշխուժացնող երաժշտության ռիթմերը, աշակերտները չեն ձանձրանում, կենտրոնանում են կատարվող գործողությունների վրա: Սա աշակերտի մոտ զարգացնում է ևս մեկ կարևոր հմտություն՝ օտար լեզվով տեղեկատվություն լսելու և

ընկալելու կարողություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ն.Բարսեղյան-«Խաղերը ուսուցման արդյունավետ միջոց»-Երևան 2001թ.
2. Ջ Գյուլամիրյան-«Խաղալով սովորենք»-Երևան 2008թ
3. Հ.Մամյան-«Խաղը որպես ուսուցման միջոց: Խաղերի կիրառությունըդպրոցում»- Երևան 2013թ.
4. Ֆ.Աճեմյան-«Հիշողությունը զարգացնող խաղեր»-Երևան 1999թ.
5. Ն.Գրիգորյան--«Ուշադրությունը զարգացնող խաղեր»---Երևան 2012թ.
6. Ա.Բաղդասարյան-«Խաղալով սովորեցնենք»-Երևան 2001թ.
7. Գևորգյան Ա-«Ուսուցում և խաղ»-Երևան 2013թ.
8. Թադևոսյան Ե.«Խաղից անցում ուսումնական գործընթացին»-Երևան 2011թ
9. Քարամյան Գ.«Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական